ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԿԱՄԱՎՈՐ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՔՆՆԱԿԱՆ ԹԵՍՏԻ

Ո Ւ Ղ Ե Ց Ո Ւ Յ Ց

ԵՐԵՎԱՆ 2024

ՆԱԽԱԲԱՆ

Հարգելի՛ ուսուցիչ, ուղեցույցում ներկայացված են 2024 թ. «Հասարակագիտություն» առարկան դասավանդող ուսուցիչների կամավոր ատեստավորման թեստի կառուցվածքը, տրված են առաջադրանքների կառուցվածքային տեսակների նկարագրությունը, առաջադրանքներում ընդգրկվելիք ծրագրային նյութի շրջանակները: Ուսուցիչների ատեստավորման թեստերի կազմման համար հիմք են ընդունվել «Հասարակագիտություն» առարկայի հանրակրթական դպրոցի ծրագրերը և ԿԳՄՄՆ կողմից երաշխավորված դասագրքերը:

ԹԵՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Թեստը կազմված է 60 հարցերից և առաջադրանքներից, որոնցից առաջին 42-ը մեկական ճիշտ ընտրովի պատասխանով, իսկ հաջորդ 18-ը՝ համապատասխանեցում և 1-ից ավել ճիշտ պատասխան ունեցող հարցեր կամ առաջադրանքներ (հինգ տարբերակի դեպքում առկա է երկու, իսկ յոթ տարբերակի դեպքում՝ երեք ճիշտ պատասխան): Թեստում կընդգրկվեն «Հասարակագիտություն» առարկայի 8-12-րդ դասարանների առարկայական ծրագրերի թեմաները (առավել մանրամասն տե՛ս 4-րդ վերնագիրը): Թեստի առաջադրանքների կատարման համար տրամադրվելու է 180 րոպե:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Ընտրովի պատասխանով առաջադրանքների համար ներկայացված են պատասխանի չորս տարբերակ, որոնցից միայն մեկն է ճիշտ: Անհրաժեշտ է նշել ճիշտ պատասխանը: Միավորը տրվում է յուրաքանչյուր հարցի միայն ճիշտ պատասխանի համար, սխալ պատասխանի կամ պատասխանի բացակայության դեպքում միավոր չի տրվում:

Մեկից ավել ճիշտ պատասխան ենթադրող առաջադրանքին տրված պատասխանը համարվում է ճիշտ, եթե դրանում տրված են բոլոր երկու կամ երեք ճիշտ տարբերակները: Սխալ, թերի պատասխանի կամ պատասխանի բացակայության դեպքում միավոր չի տրվում:

Համապատասխանեցմամբ առաջադրանքների դեպքում շարքում տրված ամեն տարբերակներին պետք է համապատասխանեցնել բացվող պատուհանի տարբերակներից ճիշտ պատասխանը: Սխալ, թերի պատասխանի կամ պատասխանի բացակայության դեպքում միավոր չի տրվում:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎՈՂ ՆՅՈՒԹԸ

Թեստում առաջադրանքներն ընտրվում են համաձայն հանրակրթական դպրոցի «Հասարակագիտություն» առարկայի 8-12-րդ դասարանների ուսումնական ծրագրերի և ԿԳՄՄՆ կողմից երաշխավորված դասագրքերի:

Ստորև ներկայացված են առաջադրաքներում ընդգրկվելիք ծրագրային նյութի շրջանակները:

8-րդ դասարան.

Գլուխ 1. Մարդ եւ հասարակություն(«Զանգակ–97» հրատարակչություն, 2018թ.)

Գլուխ 2. Հիմնարար արժեքներ

Գլուխ 3. Իշխանություն

9-րդ դասարան.

«Զանգակ-97» հրատարակչության դասագիրքն ամբողջությամբ

10-րդ դասարան.

Գեղագիտություն

Ինչ է գեղեցիկը

Գեղագիտություն: Կենցաղի և առօրեականության գեղագիտական բնութագրերը

Գեղեցիկը արվեստում

Բարոյագիտություն

Բարոյագիտություն։ Բարոյական արժեքներ

Բարոյական կշռադատումներ և որոշումների

կայացումԱզատություն և պատասխանատվություն

Հոգեբանություն

Հոգեբանության ընդհանուր հարցեր

Հոգեկանի կառուցվածքն ու գործառույթները

Անձնավորություն

Հոգեկան գործընթացներ։ Խոսքային հաղորդակցում

Անձի անհատական առանձնահատկությունները

Կոնֆլիկտը մարդու կյանքում

Տնտեսագիտություն

Տնտեսագիտության առարկան եւ խնդիրները

Շուկայական տնտեսություն։ Արժեք եւ փող

Առաջարկ եւ պահանջարկ

Բանկային համակարգ

Պետության տնտեսական դերակատարությունը

11-րդ դասարան.

Իրավունքի հիմունքներ։ Քաղաքացիական իրավունք

Ընտանեկան իրավունք

Աշխատանքային իրավունք

Քաղաքագիտություն։ Պետությունը որպես քաղաքական ինստիտուտ

Արտաքին քաղաքականությունը և Միջազգային իրավունքը

Պատերազմը և քաղաքականությունը

12-րդ դասարան.

Գոյաբանություն: Իմացաբանություն

Մտածողություն

Ես մարդ եմ

Ժամանակակից հասարակության առանձնահատկությունները և մարդու հիմնախնդիրն արդի դարաշրջանում